

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2019թ

N--- - Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԸ
ՍՈՒՐԲ ՍՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Մովսես Խորենացու փողոցը Սուրբ Մովսես Խորենացու փողոց անվանափոխելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԸ ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Երրորդ Հանրապետության հռչակումից հետո, 1990-ական թվականներից սկսված մայրաքաղաք Երևանում մի շարք փողոցներ և պողոտաներ անվանափոխվեցին և սկսեցին կրել ականավոր հայորդիների անուններ, որոնցից մեկը անվանակոչվեց Մովսես Խորենացու փողոց:

Մովսես Խորենացին եղել է Ոսկեդարի գրող-պատմիչ, մեկնիչ, բանաստեղծ, թարգմանիչ, իմաստասեր, աստվածաբան, պատմահայր: Նրա «Պատմություն Հայոց» աշխատությունը միջնադարում եղել է ազգային ինքնաճանաչման, քաղաքական-հայրենասիրական դասիարակության ուսումնական ձեռնարկ: Հայ սերունդները միշտ ակնածանքով ու երախտագիտությամբ են հիշել Խորենացուն, մեծարել նրան «Պատմահայր», «Մեծն Մովսես», «Քերթողահայր», «Տիեզերահռչակյալ» և այլ պատվանուններով: Մովսես Խորենացու գրչին վերագրվում են նաև մի շարք աստվածաբանական աշխատություններ:

Մովսես Խորենացին հայ եկեղեցու հոգևոր Հայրերի կողմից դասվել է սրբերի կարգին Յուրաքանչյուր քաղաքի փողոցի անվանումն իր մեջ ներառում է պետության և մշակույթի հետ կապված կարևոր տեղեկատվություն: Այն ներկայացնում է քաղաքի և շրջակայքի պատմությունը, տարածաշրջանի բնական-աշխարհագրական պայմանները, կրոնի, հավատքի կամ գաղափարական համոզմունքների, քաղաքային բնակչության սոցիալական առանձնահատկությունների և այլնի մասին: Բացի այդ, դրանք իրենց ներդաշնակ հնչեղությամբ և ամրագրված իմաստով կարող են ազդել քաղաքի հոգևոր մթնոլորտի, ազգաբնակչության հոգևոր-բարոյական վիճակի վրա:

Մեսրոպ Մաշտոցի անվամբ կոչված պողոտան ներկայումս չի ընդգրկում «սուրբ» անվանը, ինչն անհրաժեշտ է շտկել, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայ ազգը առաջինն է, որ քրիստոնեությունը ընդունել է որպես պետական կրոն: Աշխարհը մեզ ճանաչում է առաջին հերթին հենց այս հանգամանքից ելնելով: Մենք մշտապես պետք է բարձր պահենք և՛ եկեղեցու դերը հայ հասարակության մեջ, և՛ արժարժենք մեր Սրբերի անունները, այդպիսով նաև կրթելով ապագա սերունդներին, և, ինչո՞ւ չէ, աշխարհին ցույց տանք, որ մեր մշակույթը, պատմությունն ու արժեքներն են բնորոշում մեր ազգային ինքնությունը:

Առաջարկվող այս անվանափոխությունն ունի նաև տուրիստական լուրջ նշանակություն: Աշխարհի բազմաթիվ երկրներում փողոցներն ու հրապարակները, որոնք կրում են սրբադասված մարդկանց անուններ ունեն հատուկ գրավչություն, ինչպես նաև զբոսաշրջիկների շրջանում առաջացնում են հետաքրքրություն տվյալ երկրի և ժողովրդի նկատմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում եմ Երևանի Կենտրոն վարչական շրջանի Մովսես Խորենացու փողոցն անվանափոխել Սուրբ Մովսես Խորենացու անվան փողոց:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԸ ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Մովսես Խորենացու փողոցը Սուրբ Մովսես Խորենացու փողոց անվանափոխելու մասին» որոշման նախագծի ընդունման դեպքում Երևան քաղաքի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԸ ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի Մովսես Խորենացու փողոցը Սուրբ Մովսես Խորենացու փողոց անվանափոխելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

«ԼՈՒՅՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Թ. ՎԱՐԴԱՆՅԱՆ